Տեղեկանք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի ՀՕ-528-Ն քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 76-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետումը «393-րդ» թվերից հետո լրացնել՝ «, 393.1.-ին» թվերով»:

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի ՀՕ-528-Ն քրեական օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 393.1-ին հոդվածով.

Հոդված 2. Օրենսգրքում լրացնել նոր՝ 393.1.-ին հոդված.

« Հոդված 393.1. Ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրումը,

1. Ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրումը՝
պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասը տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝
1) զանգվածային լրատվության միջոցներով կամ համակարգչային համակարգի միջոցով,
2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝
պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնչորս տարի ժամկետով:
3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝
1) կազմակերպված խմբի կողմից,
2) պաշտոնեական դիրքն օգտագործելով՝
պատժվում է ազատազրկմամբ տասնչորսից քսան տարի ժամկետով կամ ցմահ ազատազրկմամբ:»:

Հոդված 32. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: